



ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

1. Հասուն մարդն օրական շնչում արտաշնչում է 23000 անգամ:
2. Փռշտոցի պահին մի ակնթարթ կանգ են առնում օրգանիզմի բոլոր գործառնությունները, նույնիսկ սրտի աշխատանքը:
3. Հագն առաջացնում է օդի արտամղում, որն ընդունակ է շարժվել 100- ից մինչև 900 կիլոմետր ժամ արագությամբ:
4. Մարդու թոքերն ավելի քան 300 000 000 մազանոթներ ունեն, եթե դրանք իրար հեղձից շարվեն երկարությամբ, ապա դրանց երկարությունը կկազմի 2400 կիլոմետր:

5. Մարդու մարմնի նորմալ կենսագործունեության համար նրան անհրաժեշտ է թթվածին: Թթվածինը մարդն սրանում է շնչառության միջոցով: Ներշնչման ժամանակ թոքերը լցվում են օդով, և թթվածինն օդից անցնում է արյան մեջ: Արյան շրջանառության համակարգը մղում է թթվածնով հարուստ արյունը դեպի օրգանները և հյուսվածքները, որտեղ թթվածինն օգտագործվում է սննդանյութերից քիմիական էներգիա սրանալու համար: Շնչառության միջոցով մեր օրգանիզմը մաքրվում է մահացած բջիջներից և թունավոր նյութերից:

Տարբեր գործողությունների իրականացման համար օրգանիզմին անհրաժեշտ է փարբեր քանակի էներգիա, հեղուաբար՝ նաև թթվածին: Նույնիսկ թեթև մրսածություն ունեցող հիվանդը ծախսում է ավելի շատ էներգիա, քան առողջ մարդը, որովհետև հիվանդի մարմինը, նորմալ գործունեության համար անհրաժեշտ էներգիայից բացի, պահանջում է լրացուցիչ էներգիա՝ հիվանդությանը դիմակայելու և ապաքինվելու համար:

Եթե առանց սննդի մարդը կարող է ապրել 2-3 շաբաթ, առանց ջրի՝ 5-7 օր, ապա առանց թթվածնի՝ ընդամենը 3 րոպե: